ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/90

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝

Վ. Վահանյանի (լիազորագիր, տրված՝ 13.06.2019թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված (20.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/90 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 19.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1 որոշմամբ, որի հրավերի թվով 2 չափաբաժիններով պահանջվել են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր:

Հրավերի թիվ 1-ին չափաբաժնի մասով «Տեխնիկական Բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակի 3-րդ պարբերությունում առկա «…. Պետք է երաշխավորված լինի հոսպիտալներում առկա Storz, Olympus, Fujinon և Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ ախտահանիչ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: ….», ինչպես նաև Հրավերի թիվ 2-րդ չափաբաժնի մասով «Տեխնիկական Բնութագիր» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական հատկանիշներ»-ը սյունակի 2-րդ պարբերությունում առկա «…. պարունակում է պրոպանոլ-1 և պրոպանոլ-2 տեսակների սպիրտ՝ ընդհանուր 65%-ից ոչ պակաս, (պրոպանոլ-1-ի պարունակությունը առնվազն 20%) ….» պահանջները (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները) չհիմնավորված խոչընդոտներ են առաջացրել «Խաչպար»ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովել և սահմանափակել են «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցությունը այդ չափաբաժինների մրցույթին, որոնց պատճառով «Խաչպար» ՍՊԸ-ն հարկադրված է եղել 28.10.2019թ. բողոք ներկայացնել ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձին, որին ի լրումն 07.11.2019 և 14.11.2019թթ. ներկայացրել է լրացուցիչ փաստեր ու փաստարկներ, և խնդրել է «ԳԲՔԱ-ԼՕ-2019-83» բողոքը քննող անձին՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին՝ Հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասերով:

21.11.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է «ԳԲՔԱ-ԼՕ-2019-83» որոշումով:

«Խաչպար» ՍՊԸ-ն չի մասնակցել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին, քանի որ հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման վերջնաժամկետը Հրավերով նշանակված էր 06.11.2019թ., երբ դեռ ընթանում էին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննությունները բողոքը քննող անձի կողմից:

26.11.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստ է հրավիրել, որի թիվ 3 արձանագրության «Ծանոթություն» բաժնում փաստել է, որ ընթացակարգի հայտերի բացման օրը նշանակված է եղել 06.11.2019թ. ժամը 11:30-ին, սակայն չի կայացել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգը բողոքարկելու:

28.11.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակել է նիստը և արձանագրել, որ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, հրապարակել է միակ մասնակցի առաջարկած գները և որոշել է 05.12.2019թ. գների նվազեցման բանակցություններ վարել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հետ:

05.12.2019թ. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման բանակցություններին, ինչը պարտադրել է գնահատող հանձնաժողովին մասնակցի կողմից առաջարկված գները թողնել անփոփոխ;

06.12.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակել է 26.11.2019թ. սկսված նիստը և 06.11.2019թ. էլեկտրոնային գնահատման արդյունքներից ելնելով, որոշում է կայացրել ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել միակ մասնակից «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2019թ. դեկտեմբերի 6-ի թիվ 4.1 կետով ընդունված որոշումը կայացվել է էլեկտրոնային ձևով մրցույթին ներկայացված հայտերի էլեկտրոնային գնահատման արդյունքներից ելնելով, իսկ այդ հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով՝ 2019թ. նոյեմբերի 6-ին, ժամը 11:30-ին, երբ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԳԲՔԱ-ԼՕ-2019-83» բողոքը դեռևս գտնվում էր բողոքարկման փուլում, ինչը արգելք է հանդիսացել «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ Հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասերով, իրականացնելու ՀՀ

«Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 6-ի թիվ 4.1 կետով ընդունված՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) Հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասերով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Ընդունել որոշում, որը կարգելի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում ընթացակարգի հրավերի թիվ 1 և 2 չափաբաժինների մասով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին.
2. Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ հրավերի թիվ 1 և 2 չափաբաժինների մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է բողոքի դեմ, հայտնելով հետևյալը.

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի երկրորդ կետով ներկայացված պահանջը չի կարող քննվել և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի կարող պարտավորեցվել Ընթացակարգի տեխնիկական բնութագրերում փոփոխություններ կատարել, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի գնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որը լրացել է դեռևս 06.11.2019թ. ժամը 11:30-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. նիստի որոշումը միակ մասնակից «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին թիվ 1 և 2 չափաբաժիններով հաղթող ճանաչելու վերաբերյալ չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, քանի որ Ընթացակարգի վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ-ի նախկին ԳԲՔԱ-ԼՕ-2019/83 բողոքի հիման վրա նշված գնման ընթացակարգը համաձայն Օրենքի 51-րդ հոդվածի կասեցվել էր և շարունակվել միայն բողոքը քննող անձի որոշմամբ նշված բողոքը մերժելուց հետո: Իսկ ինչ վերաբերում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 06.11.2019թ. նշված գնման գործընթացին մասնակցելու և իր առաջարկը ներկայացնելու Ընկերության իրավունքին, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ բողոքարկման փուլում գտնվելը միայն կասեցնում է գնման գործընթացը և չի սահմանափակում հնարավոր մասնակցի մասնակցությունը, առավել ևս, որ armeps համակարգը թույլատրում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը հայտեր ներկայացնել՝ անկախ կասեցման փաստի: Իսկ Ընկերության կողմից հղում կատարված Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում է, որ գնման գործընթացին մասնակցելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն ՀՀ կառավարության որոշմամբ, հետևաբար բողոքարկման փաստը որևէ կերպ չէր կարող խոչընդոտել Ընկերությանն իրականացնելու նշված գնման գործընթացին մասնակցելու իր իրավունքը:

Հաշվի առնելով վերոհիշյալ փաստերը և այն հանգամանքը, որ «Խաչպար» ՍՊԸ-ն կարծես փորձում է «պարտադրել» «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում Պատվիրատուի կողմից ապրանքների տեխնիկական բնութագրերը փոխել և «հարմարեցնել» իր առաջարկներին, չնայած այն

փաստին, որ դրա վերաբերյալ նախկին ԳԲՔԱ-ԼՕ-2019/83 բողոքն արդեն մերժվել է, Պատվիրատուն առաջարկել է բողոքն ամբողջությամբ մերժել:

Պատվիրատուն նշված դիրքորոշումը հայտնել է նաև 26.12.2019թ. թիվ ՊՆ/02/2978-2019 գրությամբ:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

3. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/83 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.11.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 06.11.2019թ.:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.10.2019թ. ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Ընկերության կողմից բողոքով ներկայացված պահանջներից է հանդիսացել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելուն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնելը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.11.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/83 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ որոշումը տեղեկագրում հրապարակվել է 25.11.2019թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.11.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, որի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող և վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը, մասնավորապես բողոքի պահանջը, գտնում եմ, որ այն վերաբերում է ոչ թե Ընկերության կողմից մատնանշված Ընթացակարգին հայտ ներկայացնելու բաց թողնված ժամկետի և մասնակցության իրավունքի վերականգնմանը, այլ Ընթացակարգի հրավերի

պահանջների վիճարկմանը, քանի որ Ընկերության բողոքով ներկայացված վերջնական պահանջը հանդիսանում է հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելը, որը սակայն արդեն իսկ քննության առարկա է դարձել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից դեռևս 28.10.2019թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/83 բողոքի շրջանակներում և որի վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող օրինական ուժի մեջ մտած իրավապարտադիր որոշում:

Ուստի ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 6-րդ մասի պահանջներով՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**